ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 նոյեմբերի 2011 թվական N90-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՃԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության ս/թ հոկտեմբերի 20-ի N29.6/{92429}-11(41) արձանագրության 7-րդ կետը

Կարգադրում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի Լճկաձոր համայնքի տարածքում ս/թ հոկտեմբերի 2-ին տեղի ունեցած սողանքային երևույթի հետևանքով տուժած ՀՀ Տավուշի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին նյութական օժանդակություն տրամադրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի
նախագահ – Լ.Սարգսյան, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ
Անդամներ – Ֆ.Ափինյան, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ռ.Ներսեսյան, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Վ.Սարգսյան, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Ա.Սարգսյան, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Մ.Մխիթարյան, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Կ.Դովլաթբեկյան, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ա.Գևորգյան, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

2. Հանձնարարել հանձնաժողովին.

2.1 10-օրյա ժամկետում ներկայացնել սողանքի հետևանքով տուժած տրանսպորտային միջոցներ ունեցող մարզի քաղաքացիների ցուցակները՝ ըստ սեփականատերերի և բնակության վայրի:

2.2 Տրանսպորտային միջոցների վնասվածության վերաբերյալ դիմել իրավասու մարմիններին վնասված տրանսպորտային միջոցների վնասվածության մասին տեղեկատվություն տալու համար:

2.3 Ներկայացնել առաջարկություն տուժած բնակիչներին օգնություն ցուցաբերելու չափի վերաբերյալ:

3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

04 նոյեմբերի 2011թ
ք.Իջևան